




ԼՐԱՏՈՒ

ԱՂՐԻԼ 2013



**«Շուկաներ
Մեղրիի համար»**



Հիմնական միջոցառումներ

Ապրիլին, «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմի հրավերքով, Մեղրիում էր գտնվում հոլանդական PUM կազմակերպության ներկայացուցիչ պարոն Գիզբերտ Կրունը: Նրա այցելության հիմնական նպատակն էր անցկացնել մի շարք խորհրդատվական հանդիպումներ՝ Նոնաձորի, Ագարակի, Ալվանքի, Կարճևանի, Շվանիձորի ֆերմերների հետ և նրանց ներկայացնել ծառերի մշակման, սրսկման ու էտման նորագույն մեթոդները: Նույն ժամանակահատվածում ՓՄՁ ՋԱԿ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից Հայաստան հրավիրվեց Կենտրոնական Ասիայում աննդի և արտադրական ինժեներինգի մասնագետ պարոն Ռուջերո Մալոսսին: Վերջինս Երևանում անցկացրեց վերապատրաստման դասընթաց, որի հիմնական թեմաներն էին՝ HACCP, չորացման տեխնոլոգիաներ և միջազգային ստանդարտներ, փաթեթավորում ու պիտակավորում: Այնուհետև պարոն Մալոսսին «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմի հրավերքով այցելեց նաև Մեղրի, որտեղ, ելնելով տարածաշրջանի կլիմայական առանձնահատկություններից, ակտիվ ֆերմերներին մշակման տարբերությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրեց: Այս ամսվա ընթացքում «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի գրասենյակ այցելեց նաև «Շուկաներ աղբատների համար» մոդելի մասնագետ պարոն Գեվին Անդերսոնը (SpringField Centre, ՄԲ): Նրա այցի հիմնական նպատակն էր օժանդակել թիմին՝ բարելավելու և հստակեցնելու ծրագրի իրագործմանն ուղղված գործողությունների պլանը:

Համագործակցության զարգացում

Ապրիլ ամսին «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը մի շարք բիզնես հանդիպումներ ունեցավ Մեղրիում: Առաջին բիզնես հանդիպումը տեղի ունեցավ «Մեղրիի պահածոների գործարանի» տնօրեն պարոն Գրիշա Գրիգորյանի հետ, որի ընթացքում, ելնելով Մյունիքի մարզում բարձր պահանջարկից, քննարկվեց ազնվամորու աճեցման և իրացման ոլորտում համատեղ պոտենցիալ ծրագրի իրականացման առաջարկը: Համագործակցության մյուս առաջարկն ստացվել է Հայաստանում ՄԱԿ-ի «Ջարգացման ծրագրի» կողմից, որը վերաբերում է Շվանիձոր գյուղում հակակարկտային ցանցերի տեղադրման համաֆինանսավորմանը:

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը հանդիպումներ ունեցավ նաև տարածաշրջանի սկսնակ գործարարների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին Մեղրիում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոնի» հիմնադրման հետ կապված հարցերը: Կենտրոնի հիմնական նպատակն է լինելու ֆերմերներին տրամադրել լայնածավալ տեղեկատվություն՝ այգեգործության նորագույն մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել համապատասխան գյուղներդրանք: Ծրագրի թիմը հանդիպում ունեցավ նաև ԱՄՆ ՄՁԳ «Մաքուր էներգիա և ջուր ծրագրի» ինժեներ պարոն Հայկ Պետրոսյանի և Ագարակի քաղաքապետ պարոն Մխիթար Ջաքարյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Ագարակի վարչական տարածքում գտնվող 22 հա հողատարածքի վրա համաֆինանսավորման միջոցով ոռոգման ցանցի կառուցման և շահագործման հարցերը: Ապրիլ ամսին «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը մեկնարկեց նաև վաղահաս կեռասի և խաղողի մշակման ծրագրերը՝ «Մեղրիի տարածաշրջանի պտղաբուծության զարգացման» ՀԿ-ի և «Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի» հետ համապատասխանաբար:

Նախատեսված միջոցառումներ

«Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի թիմը մայիսին նախատեսում է հանրային լսումներ անցկացնել Ագարակում: Լսումներին կմասնակցեն Կարճևան գյուղի 22 հա հողատարածքի սեփականատերերը: Միջոցառման նպատակ է բացահայտել, թե արդյոք այս սեփականատերերը ունեն շարժառիթներ տվյալ հողատարածքի վրա զարգացնելու պտղաբուծությունը, և ինչ լրացուցիչ միջոցներ են նրանց անհրաժեշտ: Մայիսին ծրագրի թիմը նախատեսում է նաև հանդիպում անցկացնել դոնոր կազմակերպությունների, տեղական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց լուրման ունեն տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացման գործընթացում: Հանդիպման նպատակն է լինելու գործարկել «Գյուղատնտեսական հարթակ» Մյունիք մարզի համար: Պլատֆորմի հիմնական գաղափարն է բոլոր շահագրգիռ կողմերի հետ երկու ամիսը մեկ անգամ հանդիպումներ կազմակերպել, որոնց ընթացքում և քննարկել տարածաշրջանում գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցեր: